ՏԵՂԵԿԱՆՔ

«Վանաձոր համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեի հաստատման մասին» ավագանու որոշման նախագծի 12.11.2018թ հանրային քննարկման վերաբերյալ

| Հ/հ | Տեղեկատվության բնույթը | Տեղեկատվության բովանդակությունը |
|---|---|---|
| 1 | Նախագծի իրազեկումը | Հանրության իրազեկումը սահմանված կատարվել է 31.10.2018 համայնքապետարանի պաշտոնական կայքով՝ www.vanadzor.am, ինչպես նաև տարածվել է սոցիալական ցանցով |
| 2 | Հանրային քննարկման մասնակիցներ | Հանրային քննարկմանը մասնակցում էին՝<br>1. Ավագանու անդամներ<br>• Գայանե Քալանթարյանը<br>• Արմեն Մատինյանը<br>• Սոխակ Մելքոնյանը<br>2. Համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական Արտյոմ Գրիգորյանը<br>3. Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Դինարա Մխոյանը<br>4. Համայնքի աշխատակազմի բաժնի պետեր և բաժինների աշխատակիցներ՝<br>- Նելսոն Մամուլյանը<br>- Էդիկ Հովսեփյանը<br>- Վահե Գրիգորյանը<br>- Արևհատ Հովհաննիսյանը<br>- Լուսինե Ստեփանյանը<br>- Հերմինե Զարմանյանը<br>- Լիլիթ Խաչատրյանը<br>- Լիլիթ Մելիքյանը<br>- Արմինե Փանոյանը<br>- Գեղանի Հակոբյանը<br>5. Քաղաքացիներ (նաև ԶԼՄ-ների ներկայացուցիչներ)<br>• Մարջան Չոբանյանը – Լրագրողների «Ասպարեզ » ակումբ<br>• Վաչե Մատինյան –«Ֆորտունա» հեռուստաընկերություն |

| | | |
|---|---|---|
| 3 | Հանրային քննարկումներին մասնակցության արդյունքները | Հանրային քննարկմանը ներկա ավագանու անդամ Ամեն Մատինյանի կողմից առաջարկվել է 2019 համայնքի բյուջեի նախագծի ծախսային մասում ավելացնել 5 մլն դրամ արժեքով ծախսային տող ՏԻՄ օրենքով սահմանված կարգով ավագանու խմբակցություններին հատկացված աշխատասենյակներում մեկական փորձագետների հաստիք ունենալու նպատակով:<br><br>Ավագանու անդամ Գայանե Քալանթարյանն առաջարկեց համայնքի զարգացման ռազմավարության մեջ նախատեսել նաև համայնքային ենթակայության կամ այլ իրավակազմակերպչական ձևով գործող, սակայն համայնքի կողմից ֆինանսավորվող հոգեբանական ծառայություն:<br><br>Ավագանու անդամ Սոխակ Մելքոնյանն առաջարկեց համայնքի զարգացման ռազմավարության մեջ նախատեսել նաև համայնքային ձեռնարկությունների ստեղծումը, որոնք շահույթ կհետապնդեն և կապահովեն լրացուցիչ եկամուտներ բյուջեի համար: |

Աշխատակազմի քարտուղար Արթուր Օհանյան